ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02»

ք. Երևան «10» «05» 2020 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 40-րդ օրացուցային օրը ներառյալ:
աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13 808 722 (տասներեք միլիոն ութ հարյուր ութ հազար յոթ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ, որից 2 301 454 (երկու միլիոն երեք հարյուր մեկ հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[3] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

---

[3] *Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն՝ անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դպրական դեպարտամենտ	***«ԱԳԱԹ-777» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՎՀՀ՝ -	ՀՎՀՀ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01807983
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Գ. Գրիգորյան
/ստորագրություն/Կ.Տ	/ստորագրություն/Կ.Տ

Հավելված թիվ 1
«10» «09» 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱԾՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

ՇԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ՝

ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

(Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների)

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի արժեքը	գումարը
1	2	3	4	5	6
[redacted]					
[redacted]					
1	Գոյություն ունեցող հարթ թիթեղից ծածկի քանդում ջրհոսների հետ միասին	մ²	1116,280	300	334 884
2	Տանիքի գոյություն ունեցող հարթ ցինկապատ թիթեղից երեսպատման քանդում/պարապետ,գլխադիր, ձեղնալուսամուտ, զոգնոց/	մ²	113,540	300	34 062
3	Արտաքին պատերի ներկի մաքրում հին ներկի մաքրում	մ²	46,200	500	23 100
4	Տանիքի պաշտպանիչ ճաղաշարի ապամոնտաժում	տ	0,838	25 000	20 950
5	Ջրհոս խողովակների ապամոնտաժում 13,5մ բարձրությամբ d=140	կ-տ	6,000	3 000	18 000
6	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	9,120	500	4 560
7	Մետաղապլաստե դռների և պատուհանների ապամոնտաժում	մ²	4,400	500	2 200
8	Միջնորմների քանդում պենոբլոկներից 200mm	մ³	17,140	1 300	22 282
9	Լամինատե հատակների քանդում	մ²	17,400	300	5 220
10	Պրեսզրանիտե սալերով հատակների քանդում	մ²	3,200	300	960
11	Ց/ավազե հարթաշերտի քանդում 30մմ հաստ.	մ²	3,200	500	1 600
12	Պատերի և առաստաղների հին ներկի մաքրում	մ²	389,350	300	116 805
13	Շին աղբի բարձում և տեղափոխում 12կմ հեռ.վրա	տ	30,500	800	24 400
	Ընդամենը՝ քանդման աշխատանքներ.				609 023
[redacted]					
1	Ջրհորդանների, կավարամածի և պլիպի վնասված տախտակամածի փոխարինում նորով	մ2	64,000	6 200	396 800
2	Տանիքածածկի իրականացում պրոֆիլավոր КП21-0,55մմ ցինկապատ թիթեղով /պլիպի թիթեղով,զոգնոց/	մ²	1078,700	4 500	4 854 150
3	Ջրհորդանների փոխում ցինկապատ 0.55մմ թիթեղով,	գծմ	48,400	2 000	96 800
4	Ջրհոս խողովակների կոմպլեկտ 13,5մ բարձրությամբ d=160 ցինկապատ թիթեղով	կ-տ	6,000	2 500	15 000
5	Մանր ծածկույթներ և օդափոխության պատուհանների երեսպատում 0.55մմ ցինկապատ թիթեղով	մ²	99,500	4 500	447 750
6	Ջրհոսներ 0.55մմ ցինկապատ թիթեղով	մ²	37,600	4 500	169 200
7	Փայտե կոնստրուկցիաների հրասպաշտպանություն	մ³	0,770	10 000	7 700
8	Արտաքին պատերի ներկում ֆասադային ներկով-ծեփամածիններով	մ²	46,200	2 200	101 640
9	Տանիքի պաշտպանիչ ճաղաշարի մոնտաժում հին ճաղերով	տ	0,838	180 000	150 840

10	Մետաղական ճաղաշարերի ներկում	տ	0,838	30 000	25 140
11	Տանիքի հականրդեհային ատիճանների ներկում հակակոռոզիոն ներկով	մ²	16,300	1 500	24 450
	Ընդամենը Տանիք				6 289 470
	Տանիքում տարացվող մալուխների մոնտաժում				
1	Բաշխիչ վահանի մոնտաժում ИЭК ЩЭ	հատ	1,000	100 000	100 000
2	Ավտոմատ անջատիչ ABB Tмах T43*63	հատ	1,000	50 000	50 000
3	Ավտոմատ անջատիչ ABB Tмах T41*25	հատ	4,000	50 000	200 000
4	Էլմագնիսական թողարկիչ	հատ	4,000	20 000	80 000
5	Ինքնակարգավորվող տաքացվող մալուխի մոնտաժում EXL30-2CD-30wt	գծմ	443,200	3 000	1 329 600
6	Մալուխ ВВГ 3*4 մմ2	գծմ	107,000	1 200	128 400
7	Տրոս 2,8մմ	գծմ	100,200	250	25 050
8	Ծայրակալ	կ-տ	1,000	15 000	15 000
9	Ծալքավոր խողովակ Φ25	գծմ	72,000	350	25 200
10	Ակոսի բացում	գծմ	35,000	200	7 000
11	Ակոսի փակում	մ²	1,750	2 500	4 375
12	Հերմետիկ փակվող մոնտաժային տուփ	հատ	1,000	5 000	5 000
	Ընդամենը Տանիքում տաքացվող մալուխների մոնտաժում				1 969 625
	Բացվածքների բացում				
1	Բացվածքների բացում	մ³	0,430	4 000	1 720
2	Բացվածքի ուժեղացում մետաղական էլեմենտներով	կգ	62,830	800	50 264
3	Ցեմավազե սվաղի իրականացում ցանցի վրա Φ1,5 բջիջը 20*20	մ²	1,140	3 200	3 648
	Ընդամենը բացվածքների բացում				55 632
	Միջնորմեր				
1	Միջնորմերի իրականացում պեմզաբլոկներով 200mm	մ³	5,400	19 000	102 600
2	Միջնորմերի անցքերի լցնում թեթև բետոնով	մ³	2,430	35 000	85 050
3	Ամրանավորում Φ8 A500c	տ	0,0315	350 000	11 029
4	Անցքերի շաղափում պատերում, առաստաղներում և հատակներում Φ10մմ L=100մմ	հատ	44,000	500	22 000
5	Անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	մ³	0,0030	500 000	1 500
6	Ե/բետոնե քարաշարի իրականացում B15 բետոնով	մ³	0,130	48 000	6 240
7	Ամրան Φ12A500c	տ	0,0116	320 000	3 702
8	Ամրան Φ8 A240	տ	0,0050	320 000	1 590
	Ընդամենը՝ միջնորմեր				233 711
	Վերանորոգման աշխատանքներ				
1	Ցեմավազե հարթաշերտի իրականացում 3սմ հաստ.	մ²	3,200	1 900	6 080
2	Լամինատե հատակների իրականացում ալիքով շրիշակով	մ²	20.600	4 500	92 700
3	Պատերի գաջե սվաղի իրականացում	մ²	49,200	1 800	88 560
4	Պատերի գաջե սվաղի վերանորոգում	մ²	54,290	1 800	97 722
5	Առաստաղների գաջե սվաղի վերանորոգում	մ²	30,750	2 000	61 500
6	Պատերի և շեպերի բահարթում գիպսոնիտով	մ²	162,870	1 900	309 453
7	Առաստաղների բահարթում գիպսոնիտով	մ²	92,240	1 900	175 256
8	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով ծեփամածիկով	մ²	266,360	1 300	346 268
9	Առաստաղների ներկում լատեքսային ներկով ծեփամածիկով	մ²	122,990	1 500	184 485
10	Փայտե դռների վերամոնտաժում	մ²	9,120	2 000	18 240
11	Մետաղապլաստե դռների վերամոնտաժում	մ²	3,800	2 000	7 600

«ԳԱՏ-777» "GAT-777" 01607983

	Ընդամենը՝ վերանորոգման աշխատանքներ				
	Նոր բեմ				1 387 664
1	Փայտե կոնստրուկցիաների հիդրոկանացում	մ³	0,815	190 000	154 850
2	Փայտե հոկված տախտակով 50մմ հաստ. հատակների իրականացում	մ²	6,940	8 000	55 520
3	Փայտե հոկված տախտակով 30մմ հաստ. հատակների իրականացում	մ²	0,540	5 000	2 700
4	Երեսպատում երկկողմանի լամինացված 18մմ հաստ.լամինացված սալով	մ²	1,590	10 000	15 900
5	Փայտե լամինացված եզրակալ	գծմ	5,300	400	2 120
6	Լամինատե հատակների իրականացում սպունգով 10մմ բարձ.շրիշակով	մ²	7,140	6 500	46 410
7	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	մ³	1,180	10 000	11 800
	Ընդամենը՝ նոր բեմ				289 300
	Այլ աշխատանքներ				
1	Գոյություն ունեցող ալյումինե ջեռուցման մարտկոցների ապամոնտաժում և մոնտաժում	հատ	4,000	7 500	30 000
2	Ջեռուցման խողովակների ապամոնտաժում և մոնտաժում	գմ	46,000	300	13 800
3	Գույքի տեղափոխում	տ	2,000	5 000	10 000
4	Պատերի փայտե երեսպատման ապամոնտաժում և մոնտաժում	մ²	10,000	200	2 000
	Ընդամենը՝ այլ աշխատանքներ				55 800
	Դրսի պատերի ներքին մասերի մշակում				
	2. Էլեկտրաէներգիա				
	Էլեկտրալուսավորություն				
1	ՊՊՐհՊ 3*1,5մմ² պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	42,000	1 300	54 600
2	ՊՊՐհՊ 3*4 մմ² պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	43,000	1 500	64 500
3	ՊՊՐհՊ 3*6 մմ² պղնձե ջիղով, մալուխի մոնտաժում	գծմ	18,000	2 000	36 000
4	Անջատիչ երկու սեղմակով 220Վ	հատ	2,000	1 550	3 100
5	Երկբևեռ վարդակ հողանցման հպակով 220Վ	հատ	11,000	1 550	17 050
6	Տուփ անջատիչների և վարդակների համար տեղադրումով	հատ	13,000	300	3 900
7	Բաժանման տուփեր	հատ	2,000	300	600
8	Լուսատու LED 190*190- 4000K 20wt	հատ	10,000	6 000	60 000
9	Միաֆազ ավտոմատ անջատիչ 63Ա	հատ	2,000	5 000	10 000
10	Գոյիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ Φ20 տրամագծով չայլվող	գծմ	103,000	150	15 450
11	Ակոսի բացում	գծմ	103,000	100	10 300
12	Ակոսի փակում	մ²	3,090	2 000	6 180
	Ընդամենը՝ էլեկտրալուսավորություն				281 680
	Ընդամենը				[illegible]
	Չնախատեսված աշխատանքներ 3%				
	Ընդամենը				335 163
	ԱԱՀ 20%				11 507 268
	Ընդամենը ամբողջը՝ ներառյալ ԱԱՀ-ն				2 301 454
					13 808 722

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Արշակունյաց 24/1 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դարևական գեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կողբունի 15/1
ՀՀ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար Կ. Փոխոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՀ 115000285850100
ՀՎՀՀ 01807983
«Կոնսալտինգբանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Գասպարյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 1.1
« 10 » « 09 » 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

ԿԱՊԱԼԻ ՕԲՅԵԿՏԻ, ԴՐԱ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ (ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ և ԱՅԼՆ) ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՍԱՐՔԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի վարչական շենքի վերանորոգում

Նյութերի երաշխիքային ժամկետներ

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր	Նախագծողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/
1	2	3
	Հարդարման աշխատանքներ	
1	Լամինատե հատակներ՝ սպունգով և շրիշակով	3
2	Բեմի փայտե կոնստրուկցիաներ	10
	Տանիք	
3	КП-21, 0.55մմ հաստությամբ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղ	10
4	0.55մմ հաստությամբ ցինկապատ հարթ թիթեղ	10
	Ջրահեռացման համակարգի հակասառցման կաբելային ցանց	
5	Ինքնակարգավորվող տաքացվող մալուխ EHL30-2CR 30wt	5
6	Մալուխ 3x4մմ2 ABB S 291C3x4	5
7	Հաղորդալար հողանցման 1x4մմ2 ABB S 291C1x4	5
	Էլեկտրալուսավորում	
8	Մալուխ պղնձե՝ բազմաջիղ ВВГнг 3x6 մմ²	10
9	Մալուխ պղնձե՝ բազմաջիղ ВВГнг 3x4 մմ²	10
10	Մալուխ պղնձե՝ բազմաջիղ ВВГнг 3x1,5 մմ²	10

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ցանկացած հղման դեպքում կիրառելի է <<կամ համարժեքը>> արտահայտությունը

Չափաբաժնի համար	Սարքերի և սարքավորումների					
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը	երաշխիքային ժամկետները
1	Ավտոմատ անջատիչ EKF	EKF	-	EKF	Ավտոմատ անջատիչ	5 տարի
	Ավտոմատ անջատիչ EKF	EKF	-	EKF	Ավտոմատ անջատիչ	5 տարի
	Էլմագնիսական ստարտեր (թողարկիչի կոճակներով) EKF	EKF	TDM SQ0212 -0004	EKF	Էլմագնիսական ստարտեր (թողարկիչի կոճակներով)	5 տարի
	Ավտոմատ անջատիչ՝ միաբևեռ B 63Ա, 6кA EKF	EKF	-	EKF	Ավտոմատ անջատիչ՝ միաբևեռ B 63Ա, 6кA	1 տարի
	Առաստաղին ամրացվող LED լուսատու 190x190-4000K 20Wt <<Եվրոլայթ>> ՍՊԸ	<<Եվրոլայթ>> ՍՊԸ	-	<<Եվրոլայթ>> ՍՊԸ	Առաստաղին ամրացվող LED լուսատու 190x190-4000K 20Wt	1 տարի
	Անջատիչ երկու սեղմակով պատի մեջ տեղադրվող 10Ա, մինչև 230Վ Գունսան Էլեկտրիկ	Գունսան Էլեկտրիկ	Վիզաժ	Գունսան Էլեկտրիկ	Անջատիչ երկու սեղմակով պատի մեջ տեղադրվող 10Ա, մինչև 230Վ	1 տարի
	Էլ վարդակ՝ միաբևեռ, պատի մեջ տեղադրվող 2 տեղանոց հողանցման հպակով 16Ա, մինչև 230Վ Գունսան Էլեկտրիկ	Գունսան Էլեկտրիկ	Վիզաժ	Գունսան Էլեկտրիկ	Էլ վարդակ՝ միաբևեռ, պատի մեջ տեղադրվող 2 տեղանոց հողանցման հպակով 16Ա, մինչև 230Վ	1 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ՝ -
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՀ՝ 1150000285850100
ՀԿՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Գ. Եսայան

/ստորագրություն/Կ.Տ

«ԱԳԱԹ-777»
"AGAT-777"
"GAT-777"
01807983

Հավելված թիվ 2
«10» «09» 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԹԻՎ 1

N Ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
2	Քանդման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
3	Նոր պեմզաբլոկից միջնորմների իրականացում և դռների վերատեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
4	Էլեկտրոցանցի մոնտաժման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
5	Հատակների իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
6	Նոր բեմի իրականացման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
7	Ներքին հարդարման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
8	Մանր աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
9	Այլ աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
10	Օբյեկտի հանձնում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրվա ընթացքում**

ԹԻՎ 2

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
2	Քանդման աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
3	Նոր ջրհորդանների և ջրհոսների իրականացում հարթ ցինկապատ թիթեղից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
4	Նոր տանիքածածկի իրականացում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
5	Մանր ծածկույթների իրականացում հարթ ցինկապատ թիթեղից	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
6	Ջրատար խողովակների մոնտաժում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
7	Մանր աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
8	Տանիքի հակասառեցման համակարգի մոնտաժում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
9	Այլ աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
10	Օբյեկտի հանձնում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրվա ընթացքում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՀ՝ -
ՀԿՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Գ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՀ՝ 1150000285850100
01807983
«Գրանցվածությունը» ՓԲԸ
Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

** *Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով: Աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը նշվում է «Սկիզբը» ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«10» «09» 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												ՀՀ դրամ
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/501	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

* *Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ -
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
Հ/Հ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/

«ԱԳԱԹ-777»
"AГAT-777"
"AGAT-777"
01807983

Հավելված թիվ 4
«10» «09» 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
«10» «09» 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է. որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.09.2020թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 01 » « 10 » 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 10.09.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՎՀՀ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 01 » « 10 » 2020 թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 10 » սեպտեմբերի 2020 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/501	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	13 808 722	13 808 722	13 808 722	13 808 722	13 808 722

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 900011025757
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Դեկավար՝ Ա. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱԳԱԹ-777» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՎՀՀ՝ 1150000285850100
ՀՎՀՀ՝ 01807983
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Դ. Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ